

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՐՐ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ՀՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

DOI: 10.52174/2579-2989_2021_2_5

Հիմնաբառեր. *տնտեսական արդյունավետություն, ֆինանսական ցուցանիշներ, ոլորտային զարգացում, ներդրումային գործունեություն*

Տնտեսական գործունեության ոլորտների արդյունավետությունը բիզնես միջավայրի զարգացման կարևորագույն հիմքերից մեկն է: Արդյունավետ գործող ոլորտները ներդրողի համար ապահովում են հավելյալ գրավչություն, իսկ այդ գրավչության ցածր կամ բարձր մակարդակը նախանշում է երկարաժամկետում ոլորտների հավասարաչափ զարգացում:

Հոդվածում գործունեության ոլորտների արդյունավետության ուսումնասիրությունն իրականացվել է ըստ դրանց տեսակների դասակարգչի: Որպես տնտեսական գործունեության ոլորտների արդյունավետությունը բացատրող առաջնային ցուցանիշներ են ընդունվել և դիտարկվել ընթացիկ իրացվելիությունը, սեփական շրջանառու միջոցներով ապահովվածությունը, ֆինանսական ինքնավարությունը, արտադրանքի և ակտիվների շահութաբերությունը:

Յուրաքանչյուր երկրում տնտեսական գործունեության տարբեր ոլորտներին բնորոշ են արդյունավետության տարբեր մակարդակներ, և շուկա մուտք գործող տնտեսավարողների համար ցանկացած պարագայում կարևոր է պարզել, թե որ ոլորտներն են առավել արդյունավետ գործում տվյալ երկրում: Բնականաբար, արդյունավետության համեմատաբար բարձր մակարդակով աչքի ընկնող ոլորտները, ներդրումներ կատարելու տեսանկյունից, առավել գրավիչ են տնտեսավարողների համար: Հետևաբար, հաշվի առնելով վերոնշյալը, մշտապես առկա է տնտեսական գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության համեմատական վերլուծություն իրականացնելու անհրաժեշ-



**Գագիկ
ԲԱԴԱԴՅԱՆ**
ՀՊՏՀ մագիստրոս

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը («Հակաճգնաժամային կառավարում»), ապա մագիստրատուրան («Գործարար վարչարարություն»): Ուսմանը զուգահեռ, եղել է «Ամբերդ» հեղինակական կենտրոնի հեղինակական խմբի անդամ: Ներկայում «Փարվանյան Քոնսալթինգ» խորհրդարարական ընկերության ֆինանսական տնօրենն է, ինչպես նաև, որպես փորձագետ, աշխատում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունում: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական հոդվածների:

տություն: Բացի այդ, ներդրումների բաշխումը, հիմնված արդյունավետության վրա, կարող է հանգեցնել ոլորտային զարգացման հավասարակշռության հաստատմանը, քանի որ ներդրումային հոսքերի նման շարժը կարող է տանել համակարգային արդյունավետության մակարդակի բարձրացման:

Այսպիսով՝ փորձենք իրականացնել գործունեության ոլորտների արդյունավետության ուսումնասիրություն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ)¹՝ այդ նպատակով դիտարկելով ընթացիկ իրացվելիության, սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության, ինքնավարության, ինչպես նաև արտադրանքի և ակտիվների շահութաբերության գործակիցները: Նշենք, որ 2020 թվականի հաշվարկներում ընտրանքը ներառել է 3,839 առևտրային կազմակերպությունների ցուցանիշներ²: Աղյուսակ 1-ում ներկայացված են գործունեության այն ոլորտները և վերջիններիս կողավորման (պայմանանշանների) համակարգը, որոնց վերաբերյալ առկա են վիճակագրա-

կան տեղեկություններ՝ համաձայն որոնց կատարվել է համապատասխան վերլուծություն:

Նախ՝ ուսումնասիրենք աղյուսակ 1-ում տեղ գտած ոլորտներում գործող կազմակերպությունների ընթացիկ իրացվելիության վիճակը: Համապատասխան գործակիցը հաշվարկվում է որպես կազմակերպությունում առկա ընդամենը ընթացիկ ակտիվների փաստացի արժեքի և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցություն³: Այլ կերպ ասած, դա ցույց է տալիս, թե ընթացիկ պարտավորությունների որ մասը հնարավոր կլինի մարել, եթե կազմակերպությունը կարողանա հավաքագրել իր բոլոր դեբիտորական պարտավորությունները և իրացնել իր բոլոր պաշարները: Ընթացիկ իրացվելիության գործակիցը կազմակերպության վճարունակության բնութագրիչն է⁴:

Այն դեպքում, երբ ընթացիկ իրացվելիության գործակիցը փոքր է 1-ից, առկա են ակտիվների և պասիվների կառավարման լուրջ խնդիրներ, քանի որ կազմակերպությունն իր ընթացիկ պարտավորու-

ԱՂՅՈՒՍԱԿ 1


Գործունեության դիտարկվող ոլորտները և դրանց կողավորումը

Բաժինը	Գործունեության տեսակը
A.	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
B.	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
C.	Մշակող արդյունաբերություն
D.	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
E.	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
F.	Շինարարություն
G.	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում
H.	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
I.	Կազմության և հանրային սննդի կազմակերպում
J.	Տեղեկատվություն և կապ
L.	Մնշարժ գույքի հետ կապված գործունեություն
M.	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն
N.	Վարչարարական և օժանդակ գործունեություն
O.	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն
P.	Կրթություն
Q.	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում
R.	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ
S.	Սպասարկման այլ ծառայություններ

¹ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009 թ. հունիսի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» թիվ 372-Ն հրաման:

² Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 24-25:

³ Նույն տեղում, էջ 24:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ-ում գործունեության ոլորտների ընթացիկ իրացվելիության գործակիցները 31.12.2019 թ. դրությամբ

թյունների հաշվին ունի ձևավորված ոչ ընթացիկ ակտիվներ: Ոլորտի (կազմակերպությունների համախումբ) դեպքում նման միջին ցուցանիշի առկայությունը նույնպես խնդրահարույց է, քանի որ դա ցույց է տալիս ոլորտի կազմակերպություններին բնորոշ իրավիճակը: Եվ եթե նման իրավիճակ է տիրում ողջ ոլորտում, ապա ակնհայտ է, որ դրան հանգեցրել են այդ համակարգում ձևավորված բնութագրիչները, հետևաբար՝ տվյալ համակարգը, ընթացիկ իրացվելիության ապահովման տեսանկյունից, ամենաարդյունավետը չէ:

Գծապատկեր 1-ում ներկայացված են ՀՀ-ում գործունեության տարբեր ոլորտների ընթացիկ իրացվելիության գործակիցները 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ⁴:

Ինչպես տեսնում ենք, 18 ոլորտից 8-ի դեպքում ընթացիկ իրացվելիության գործակիցը գերազանցում է ողջ ընտանիքի ընթացիկ իրացվելիության գործակիցը: Սակայն, ընթացիկ իրացվելիության ապահովման լրջագույն խնդիր առկա է միայն երկու ոլորտում՝ տեղեկատվություն և կապ, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում: Այս ոլորտներում ընթացիկ իրացվելիության գործակիցը փոքր է 1-ից, այսինքն՝ տվյալ կազմակերպությունները՝ անգամ իրենց ողջ ընթացիկ ակտիվների իրացմամբ, չեն կարող ապահովել ընթացիկ պարտավորությունների ամբողջական մարում: Նման


իրավիճակը կարող է բացատրվել մեծ ծավալի ոչ ընթացիկ ակտիվների առկայության անհրաժեշտությամբ, սակայն սա չի նշանակում, որ այս ոլորտի կազմակերպությունները պետք է գոյացնեն երկարաժամկետ ակտիվներ՝ կարճաժամկետ պարտավորությունների հաշվին:

Ընթացիկ իրացվելիության տեսանկյունից, ընտանիքի միջինի համեմատ բավական բարձր իրացվելիություն ունեն գյուղատնտեսությամբ, փոխադրումներով և պահեստային տնտեսությամբ, մշակող արդյունաբերությամբ, կացության և հանրային սննդի կազմակերպմամբ, մեծածախ և մանրածախ առևտրով զբաղվող կազմակերպությունները: Նշված 5 ոլորտում ընթացիկ իրացվելիության գործակիցի կայունությունը 2016-2019 թվականներին ներկայացված է գծապատկեր 2-ում⁵:

Ինչպես նկատում ենք, ներկայացված ոլորտներում 2016-2019 թվականներին համապատասխան գործակիցը եղել է բավականաչափ կայուն: Սակայն, պետք է նշել, որ առանձնակի կայունությամբ աչքի են ընկնում փոխադրումները և պահեստային տնտեսությունը, ինչպես նաև մեծածախ և մանրածախ առևտուրը, հետևաբար՝ կարող ենք արձանագրել, որ հենց այդ երկու ոլորտն են ամենաարդյունավետն ընթացիկ իրացվելիության տեսանկյունից: Արդարության համար ասենք, որ այդ ոլորտներում նշված ցուցանիշի ապահովման դյուրինությունը պայմանավոր-

⁴ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 42-43:

⁵ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2017, 2018, 2019, 2020:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



Ընթացիկ իրացվելիությամբ առաջատար 5 ոլորտում գործակցի կայունությունը 2016-2019 թթ.


ված է դրանցում առկա ընթացիկ ակտիվների մեծ ծավալով:

Ընթացիկ իրացվելիության վերաբերյալ դիտարկումներն ամփոփենք ողջ ընտրանքի միջինի նկատմամբ բոլոր ոլորտների ցուցանիշների շեղվածության բացահայտմամբ: Շարքի միջին քառակուսային շեղման և ընտրանքի միջինի հարաբերակցությունը մոտ 43% է, ինչը վկայում է, որ ՀՀ տարբեր ոլորտներում ընթացիկ իրացվելիության ապահովման հնարավորությունները բավականաչափ տարբերակված են, հետևաբար՝ մինչ ներդրումների իրականացումն անհրաժեշտ է առանձնակի անդրադարձ կատարել ոլորտներում այս ցուցանիշի վերլուծությանը:

Արդյունավետ գործունեության մեկ այլ ցուցիչ է սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակիցը, որը

հաշվարկվում է որպես սեփական (պաշարներ, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ) և կազմակերպությունում առկա ընթացիկ ակտիվների փաստացի արժեքի հարաբերակցություն⁶: Այս ցուցանիշն արտացոլում է այն իրողությունը, թե կազմակերպության ընթացիկ ակտիվների քանի տոկոսն են կազմում այն ակտիվները, որոնք այդ պահին կազմակերպության տիրապետման տակ են: Բնականաբար, որքան մեծ է այս ցուցանիշը, այնքան փոքր են կազմակերպության դեբիտորական պարտավորությունների ծավալները, հետևաբար՝ այնքան բարձր է ընթացիկ ակտիվների կառուցվածքի արդյունավետության մակարդակը: Ակնհայտ է, որ նվազագույն պահանջ է այս ցուցանիշի՝ 50%-ից բարձր լինելու հանգամանքը:

ՀՀ-ում գործունեության տարբեր ոլորտ-




ԳԾԱՊԱՏԿԵՐ 3



ՀՀ-ում գործունեության ոլորտների սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակիցները 31.12.2019 թ. դրությամբ

⁶ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 24:



ԳԾԱՊԱՍԿԵՐ 4

Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածությամբ առաջատար 9 ոլորտում գործակցի կայունությունը 2016-2019 թթ.

ների՝ սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակիցները 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են գծապատկեր 3-ում⁷:

Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության պարագայում՝ ընտրանքի միջինի նկատմամբ ոլորտների այս ցուցանիշի շեղվածությունը բավականաչափ փոքր է, մասնավորապես՝ շարքի միջին քառակուսային շեղման և միջինի հարաբերակցությունը՝ 27%: Սա վկայում է այն մասին, որ ՀՀ-ում, ընդհանուր առմամբ, սեփական միջոցներով ապահովվածության ցանկալի մակարդակի ապահովման հնարավորությունները խորությամբ տարբերակված չեն: Այժմ դիտարկենք քննարկվող ցուցանիշի կայունությունն այն ոլորտներում, որտեղ դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընթացիկ ակտիվներում փոքր է 50%-ից (գծապատկեր 4)⁸: Նման արդյունք ունեցող ոլորտների թիվը 9 է:

Նշված 9 ոլորտից 3-ի դեպքում՝ մշակող արդյունաբերություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում, մեծածախ և մանրածախ առևտուր, սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության կայունությունը շարժընթացում բավականաչափ բարձր մակարդակում է: Հետևաբար՝ նշված 3 ոլորտը, սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության տեսանկյունից, հարաբե-

րականորեն կարող ենք համարել ամենաարդյունավետը:

Տնտեսական գործունեության ոլորտների արդյունավետությունը բնութագրող հաջորդ ցուցանիշն ինքնավարության գործակիցն է, որը հաշվարկվում է որպես կազմակերպության սեփական միջոցների և միջոցների գոյացման աղբյուրների մեծության հարաբերակցություն⁹: Այլ կերպ ասած, այս ցուցանիշն արտացոլում է, թե կազմակերպության պասիվների քանի տոկոսն են կազմում սեփական միջոցները: Այն նաև ֆինանսական կայունությունը պայմանավորող կարևորագույն ցուցիչ է: Ֆինանսական լծակի արդյունավետության տեսանկյունից, դրա նախընտրելի մեծությունը տատանվում է 33%-ի շուրջ:

Գծապատկեր 5-ում արտացոլված են քննարկվող 18 ոլորտի ինքնավարության գործակիցները¹⁰:


Ինչպես տեսնում ենք, ողջ ընտրանքում ինքնավարության գործակիցը բավականաչափ մոտ է նախընտրելի մեծությանը, սակայն ակնհայտ է, որ տարբեր ոլորտներում միջինից շեղումը բավականաչափ մեծ է, մասնավորապես՝ շարքի միջին քառակուսային շեղման և միջինի հարաբերակցությունը՝ մոտ 74%: Ավելին, կարող ենք առանձնացնել ընդամենը 3 ոլորտ՝ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, մշակող արդյունաբերություն և վարչարարական-օժան-

⁷ Նույն տեղում, էջ 43-44:

⁸ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2017, 2018, 2019, 2020:

⁹ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 24:

¹⁰ Նույն տեղում, էջ 44:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

ՀՀ-ում գործունեության ոլորտների ինքնավարության գործակիցները 31.12.2019 թ. դրությամբ

դակ գործունեություն, որտեղ այս ցուցանիշը նախընտրելի միջակայքում է: Գծապատկեր 6-ում ներկայացված է նշված ոլորտներում ինքնավարության գործակցի կայունությունը 2016-2019 թվականներին¹¹:


Գծապատկեր 6-ից ակնհայտ է, որ, ընդհանուր առմամբ, ներկայացվող 3 ոլորտում էլ նշված ցուցանիշը 2016-2019 թվականներին եղել է բավականաչափ կայուն, սակայն, այս տեսանկյունից, առավել աչքի է ընկնում էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտը:

Ամփոփելով ինքնավարության դիտարկումները՝ կարող ենք արձանագրել, որ այս առումով տարբեր ոլորտների միջև առկա են մեծ տարբերություններ, հետևաբար՝ կառավարչական արդյունավետ որոշում-

ներ կայացնելու համար յուրաքանչյուր տնտեսավարող պետք է կատարի մանրամասն դիտարկումներ:

Այժմ անցում կատարենք այն ցուցանիշների ուսումնասիրությանը, որոնք ուղղակիորեն են բացատրում ոլորտներում տնտեսական գործունեության արդյունավետությունը: Բնականաբար, խոսքը շահութաբերության գործակիցների մասին է:

Անդրադարձ կատարենք արտադրանքի շահութաբերություն ցուցանիշին: Վերջինս բնութագրում է կազմակերպության գործունեության արդյունավետությունը, որը հաշվարկվում է որպես արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) իրացումից ստացված շահույթի և իրացված արտադրանքի ինքնարժեքի, իրացման և վարչական ծախսերի հարաբերակցություն¹², ցույց է տալիս, թե կազմակերպության գործառ-




ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Կապիտալի կառուցվածքով առաջատար 3 ոլորտում ինքնավարության գործակցի կայունությունը 2016-2019 թթ.

¹¹ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2017, 2018, 2019, 2020:

¹² «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 24:



ԳԾԱՊԱՏՎԵՐ 7

ՀՀ-ում գործունեության ոլորտների արտադրանքի շահութաբերության գործակիցները 31.12.2019 թ. դրությամբ

Նական ֆինանսական արդյունքը (իրացումից ստացված շահույթը) կատարված գործառնական ծախսերի որ մասն է կազմում:

Գծապատկեր 7-ում արտացոլված է այս ցուցանիշի մեծությունը քննարկվող ոլորտներում¹³:

Ընտրանքում ընդգրկված բոլոր կազմակերպությունների արտադրանքի շահութաբերության միջին ցուցանիշը 12.3% է, սակայն ոլորտային ցուցանիշները վերջինիս նկատմամբ բավականաչափ շեղված են, մասնավորապես՝ շաքի միջին քառակուսային շեղման և ընտրանքի միջինի հարաբերակցությունը 95.9% է: Այս ցուցանիշը վկայում է, որ տնտեսական արդյունավետության տեսանկյունից, դիտարկվող ոլորտները բավականաչափ տարբերվում են միմյանցից, հետևաբար՝ ցանկացած պարագայում անհրաժեշտ է իրականացնել մանրամասն ուսումնասիրություն:

Բավական ցածր շահութաբերություն է գրանցվել գործունեության երկու ոլորտում՝ մշակույթ, զվարճություններ, հանգիստ (1.1%) և պետական կառավարում, պաշտպանություն (0.5%): Երկրորդ դեպքում նման ցածր ցուցանիշի առկայությունը ենթադրելի է և ընդունելի, սակայն մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում շահութաբերության՝ ընդամենը 1.1% գործակիցը բացարձակապես ընդունելի չէ ներդրողների համար, հետևաբար՝

ոլորտը չունի գրավչություն և այսպես շարունակվելու դեպքում՝ չի էլ կարող ունենալ:


Արտադրանքի շահութաբերության բավական բարձր (ավելի քան 30%) ցուցանիշ է գրանցել 3 ոլորտ՝ կացության և հանրային սննդի կազմակերպում, սպասարկման ծառայություններ, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում: Այս տեսանկյունից, գոհացուցիչ արդյունք են գրանցել նաև անշարժ գույքի հետ կապված գործունեության, փոխադրումների և պահեստային տնտեսության, շինարարության, գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության ոլորտները, որտեղ համապատասխան գործակիցը 20-30%-ի միջակայքում է:

Կայունության ուսումնասիրություն իրականացնենք միայն երեք ամենաբարձր շահութաբերություն ունեցող ոլորտների համար: Գծապատկեր 8-ում¹⁴ ներկայացված են արտադրանքի շահութաբերության գործակիցների ցուցանիշները:

Ինչպես տեսնում ենք, 2016-2019 թվականներին երեք ոլորտում էլ արտադրանքի շահութաբերություն ցուցանիշն այնքան էլ կայուն չի եղել (ինչն այս ցուցանիշի դեպքում հաճախ հանդիպող իրավիճակ է), մինչդեռ սպասարկման ծառայությունների ոլորտում նույն ժամանակահատվածում եղել է բավականաչափ կայուն, և միջինի նկատմամբ շեղումը կազմել է ընդամենը 11.3%:

¹³ «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 40-41:

¹⁴ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Եր., 2017, 2018, 2019, 2020:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

Արտադրանքի շահութաբերությամբ առաջատար 3 ոլորտում գործակցի կայունությունը 2016-2019 թթ.


Ամփոփելով արտադրանքի շահութաբերության գործակցի դիտարկումները՝ կարող ենք արձանագրել, որ նշված ոլորտներից 8-ի դեպքում ֆինանսական արդյունավետությունը կարելի է գնահատել բարձր (դրանք այն ոլորտներն են, որտեղ արտադրանքի շահութաբերության ցուցանիշը գերազանցում է 20%-ը), հետևաբար՝ ներդրողի կողմից դրանք կարող են ընկալվել որպես գրավիչ:

Ինչ վերաբերում է ակտիվների շահութաբերություն գործակցին, ապա վերջինս հաշվարկվում է որպես ֆինանսական արդյունքի (զուտ շահույթ, (վնաս)) և ակտիվների միջին արժեքի հարաբերակցություն¹⁵: Այս ցուցանիշն արտացոլում է, թե կազմակերպությունը որքանով է արդյու-

նավետորեն օգտագործում իր տիրապետման և տնօրինման տակ գտնվող տնտեսական միջոցները:

Գծապատկեր 9-ում ներկայացված են ակտիվների շահութաբերության ցուցանիշները քննարկվող ոլորտներում¹⁶:

Ընտրանքում ընդգրկված բոլոր կազմակերպությունների ակտիվների միջին շահութաբերությունը 7.2% է, որից շարքի շեղման ցուցանիշը՝ 44.5%: Դրանով հանդերձ, շարքում ակտիվների շահութաբերությունը տատանվում է 2-13%-ի միջակայքում: Այս համատեքստում կարիք չկա առանձնացնելու այն ոլորտները, որտեղ ակտիվների շահութաբերությունը ցածր մակարդակում է, քանի որ դա ամբողջությամբ բնականոն երևույթ է (օրինակ՝




ԳԾԱՊԱՏԿԵՐ 9

Ակտիվների շահութաբերությամբ առաջատար 3 ոլորտում գործակցի կայունությունը 2016-2019 թթ.

¹⁵ «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 24:

¹⁶ Նույն տեղում, էջ 41-42:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 10



Ակտիվների շահութաբերությամբ առաջատար 4 ոլորտում գործակցի կայունությունը 2016-2019 թթ.

հանքագործական արդյունաբերություն): Սակայն, հարկ ենք համարում անդրադառնալ այն ոլորտներին, որտեղ ակտիվների շահութաբերությունը գերազանցում է 10%-ը: Նման արդյունք է գրանցել չորս ոլորտ՝ կացություն և հանրային սննդի կազմակերպում, մեծածախ և մանրածախ առևտուր, մշակող արդյունաբերություն, ինչպես նաև վարչարարական և օժանդակ գործունեություն: Գծապատկեր 10-ում¹⁷ ներկայացված են այդ ոլորտներում ակտիվների շահութաբերության կայունության ցուցանիշները 2016-2019 թվականներին¹⁸:

Հիմնվելով գծապատկեր 10-ում ներկայացված ցուցանիշների վրա՝ կարող ենք արձանագրել, որ ակտիվների շահութաբերությամբ առաջատար 4 ոլորտում գործակցի կայունությունը 2016-2019 թվականներին եղել է միջին մեծության: Ընդ որում, համեմատաբար առաջանցիկ դիրք է ունեցել մշակող արդյունաբերությունը:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ակտիվների շահութաբերության տեսանկյունից, դիտարկվող ոլորտների ցանկում գոր-

ծունեության անարդյունավետ ոլորտ գոյություն չունի, քանի որ բոլոր 18 ոլորտի դեպքում էլ ցուցանիշներն արդարացված են:

Որպես ամփոփում՝ կարող ենք ասել, որ ցանկացած պարագայում անհնար է գործունեության որևէ ոլորտ համարել բացարձակ արդյունավետ կամ բացարձակ անարդյունավետ: Ոլորտի արդյունավետությունը, ներդրողի տեսանկյունից, համալիր հասկացություն է, և այդ արդյունավետությունը պայմանավորող, բայց չսահմանափակող բնութագրիչներ են վերոքննարկյալները: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր ներդրում պայմանավորված է ներդրումային «հորիզոնով» ու սահմանափակումներով, և այդ բնութագրիչներն են, որ պետք է սահմանեն քննարկվող ցուցանիշների նպատակադրումները, սակայն նմանատիպ վերլուծության իրականացումը, որպես արտաքին միջավայրի ուսումնասիրություն, ներդրումային գործունեության պարագայում պարզապես անհրաժեշտություն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009 թ. հունիսի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» 372-Ն հրաման:
2. Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ ՎԿ, Երևան, 2017, 2018, 2019, 2020:

ПУЛЬС ЭКОНОМИКИ

В КАКОЙ СФЕРЕ ЭКОНОМИКИ ОРГАНИЗАЦИИ РАБОТАЮТ НАИБОЛЕЕ ЭФФЕКТИВНО В РА?

Эффективность сфер экономической деятельности - одна из важнейших основ развития деловой среды. Эффективные сферы деятельности обеспечивают дополнительную привлекательность для инвесторов, а низкий или высокий уровень этой привлекательности обеспечивает сбалансированное развитие сфер деятельности в долгосрочной перспективе. В статье исследование эффективности сфер деятельности проводилось по классификатору видов экономической деятельности. В качестве основных показателей, объясняющих эффективность сфер экономической деятельности, были проанализированы и рассмотрены следующие коэффициенты: коэффициент текущей ликвидности, коэффициент собственных оборотных средств, коэффициент автономии, рентабельность продукта и рентабельность активов.

Ключевые слова: *экономическая эффективность, финансовые показатели, отраслевое развитие, инвестиционная деятельность*

Gagik BADADYAN
Магистр делового администрирования, АГЭУ

PULSE ECONOMICS

IN WHICH FIELD OF ECONOMY DO ORGANIZATIONS WORK MORE EFFECTIVELY IN THE RA?

Macroeconomic stability in each country is characterized by a simultaneous equilibrium in the real andThe efficiency of the fields of economic activities is one of the most important foundations for the development of the business environment. Effective fields of activity provide additional attractiveness for the investors, and the low or high level of that attractiveness ensures balanced development of fields of activity in the long run. In the paper, the study of the efficiency of the fields of activity was carried out according to the classifier of the types of economic activity. In the research, the following ratios were analyzed and considered as the primary indicators explaining the efficiency of the fields of economic activity: current liquidity ratio, own current funds ratio, autonomy ratio, product profitability and profitability of assets.

Keywords: *economic efficiency, financial indicators, sectoral development, investment activities*